

Address: 3/2 Hakob Hakobyan st. Yerevan, Armenia
phone: (+374 60) 75 79 69, mobile: (+374 94) 28 79 69,
e.mail: info@dasaran.am

Հասցե՝ Հայաստան, Երևան, Հակոբ Հակոբյան 3/2
հեռ.՝ (+374 60) 75 79 69, բջջ.՝ (+374 94) 28 79 69
Էլ. փոստ՝ info@dasaran.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ՆԱԻՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆԻՆ

01. 02. 2018թ.

Հարգելի՛ պարոն Հարությունյան

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և «Դասարան» ուսումնաստեղեկատվական ծրագրի միջև 14.02.2017 թվականին կնքված N Ա-9.6.1/49 պայմանագրի և 20.07.2017 թվականին կնքված նշված պայմանագրի համաձայնագիր 1-ի՝ Ձեզ եմ ներկայացնում «Դասարան»-ի՝ 2017 թվականի չորրորդ եռամսյակի (հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր) գործունեության ամփոփ հաշվետվությունը:

Ըստ հիշյալ պայմանագրի և համաձայնագիր 1-ի՝ կատարման ենթակա գործառույթներն են Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում գործող էլեկտրոնային մատյանի և էլեկտրոնային օրագրի, հանրակրթական դպրոցների տնօրեններին տրամադրված էլեկտրոնային կառավարման ու տեղեկատվական գործիքի աշխատանքների ապահովումը, դպրոցներում թափուր հաստիքների մասին հայտարարությունների միասնական առցանց համակարգի ստեղծումը, խաղայնացված կրթության, աշակերտների էլեկտրոնային խրախուսման համակարգի և ուսուցիչների միասնական էլեկտրոնային միջավայրի ստեղծումը:

Մասնագր No 2994-18
02 02 2018թ.

Հաշվետվություն

1. Էլեկտրոնային մատյան և էլեկտրոնային օրագիր

Նպատակ ունենալով բարելավել հանրակրթության ոլորտը և նպաստել նշված ոլորտի զարգացմանը, թափանցիկության աճին՝ «Դասարան»-ը մշակել և Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում ներդրել է գնահատման էլեկտրոնային համակարգ, ի մասնավորի՝ էլեկտրոնային մատյան և էլեկտրոնային օրագիր:

Ուսումնական գործընթացի դյուրացմանն ու վերահսկելիությանը ծառայող թվային մատյանը և օրագիրը նախատեսված են հանրակրթական բոլոր դպրոցների (ավագ, միջնակարգ, հիմնական, տարրական, վարժարան) համար ու տարածվում են դպրոցների 1-12-րդ դասարանների վրա:

2017 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում էլեկտրոնային մատյանի և էլեկտրոնային օրագրի աշխատանքների ապահովման համատեքստում «Դասարան»-ն իրականացրել է՝

- աշակերտների գնահատականների, բացակայությունների և տնային հանձնարարությունների արձանագրում, տեսանելիության ու թափանցիկության ապահովում (պետական հանրակրթական բոլոր դպրոցներում դասավանդող ուսուցիչների համար «Դասարան»-ի կայքում գործում են աշխատանքային մասնագիտական էջեր, որոնց միջոցով մանկավարժները կատարում են ամենօրյա անհրաժեշտ մուտքագրումներ: Ըստ որում՝ այդ էջերում ուսուցչին տեսանելի են միայն այն առարկաները, որոնք նա դասավանդում է, և այն դասարանները, որտեղ սվյալ ուսուցիչը դասավանդում է: Համակարգը թե՛ ուսուցչի, թե՛ ծնողի, թե՛ աշակերտի համար անվտանգ է և տեսանելի միայն նրանց առնչվող տեղեկատվության հատվածով),
- աշակերտների առաջադիմության արձանագրում և տեսանելիության ապահովում, կիսամյակային ու տարեվերջյան գնահատականների ավտոմատ հաշվարկում (և՛ ուսուցիչը, և՛ ծնողն իրենց հասկացված էլեկտրոնային

DASARAN | ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ EDUCATIONAL PROGRAM

միջավայրի օգնությամբ տեսնում են ինչպես աշակերտի առաջադիմության ընթացիկ պատկերը, այնպես էլ կիսամյակային և տարեվերջյան ամփոփիչ գնահատականները: Վերջիններս համակարգը հաշվարկում է ավտոմատ կերպով՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության սահմանած հաշվարկային բանաձևին համապատասխան: Ընդ որում՝ պայմանավորված առարկաների ժամաքանակների տարբերությամբ (մինչև 1,5, 2 և ավելի) համակարգն ավտոմատ կերպով հաշվարկում է երկու տեսակի ամփոփիչ կիսամյակային գնահատականներ):

- «Դասարան»-ը կատարել է էլեկտրոնային մատյանի և օրագրի կատարելագործման աշխատանքներ՝ վերափոխելով աշակերտների և ծնողների էլեկտրոնային միջավայրը՝ հնարավորություն տալով համապարփակ վիճակագրական վերլուծություն ստանալու աշակերտների առաջադիմության և բացակայությունների վերաբերյալ:
- Փոփոխություններ են կատարվել ուսուցիչների անհատական աշխատանքային միջավայրում՝ հնարավորություն տալով յուրաքանչյուր ուսուցչի համապարփակ վիճակագրական վերլուծություն ստանալու իր աշակերտների առաջադիմության և բացակայությունների վերաբերյալ:
- Իրականացվել են դպրոցներում նշանակված նոր օպերատորների վերապատրաստումներ՝ ըստ անհրաժեշտության:

2017 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում էլեկտրոնային մատյանի և էլեկտրոնային օրագրի աշխատանքներն առավել արդյունավետ դարձնելու, ուսումնական գործընթացի թվային կառավարումը կատարելագործելու նպատակով «Դասարան»-ն ապահովել է՝

- «Դասարան»-ի կայքում կատարվող ամենօրյա մուտքագրումների լիարժեքության վերահսկում, որը ենթադրում է՝
 - ամենօրյա մուտքագրումների մշտադիտարկում, թերացումների վերհանում և շտկում (առկա թերացումները շտկելու և ուսումնական գործընթացի թվային

կառավարումը լիարժեք դարձնելու նպատակով հանրակրթական դպրոցներ (տնօրեններին և օպերատորներին) պարբերաբար ուղարկվել/ում են գրություններ և արդյունավետության նամակներ),

- ուսումնական գործընթացի լիարժեք թվային կառավարում (այդ նպատակով գրություններ և արդյունավետության նամակներ են ուղարկվում նաև ԿԳՆ, ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան):
- «Նոր սերնդի դպրոց» հանրակրթական դպրոցների վարկանիշավորման համապետական մրցույթի իրականացում (դպրոցներում գործող էլեկտրոնային մատյանի հնարավորությունների համապարփակ կիրառումը՝ որպես էլեկտրոնային կառավարման միջոցով կրթության որակական բարեփոխմանը միտված հերթական նշանակալի նախաձեռնություն խթանելու, ուսուցիչների համակարգչային գիտելիքների վերազինմանը նպաստելու նպատակով «Դասարան»-ը յուրաքանչյուր տարի իրականացնում է «Նոր սերնդի դպրոց» հանրակրթական դպրոցների վարկանիշավորման մրցույթը, որին մասնակցում են «Դասարան»-ի համակարգում ներառված բոլոր կրթօջախները: Ի դեպ, մրցույթի շրջանակում հաղթող ճանաչված դպրոցները պարգևատրվում են համակարգիչներով, գրադարաններով և խրախուսական մրցանակներով): Ս.թ. նոյեմբերի 28-ին տեղի է ունեցել «Նոր սերնդի դպրոց 2016-2017» մրցույթի ամփոփման և մրցանակաբաշխության հանդիսավոր արարողությունը, որի ընթացքում 51 դպրոց պարգևատրվել է համակարգիչներով, գրադարաններով և խրախուսական մրցանակներով:
- տվյալ ամսվա գերազանցիկների անունների հրապարակում (յուրաքանչյուր ամիս տվյալ ամսվա կտրվածքով բոլոր դպրոցների բոլոր դասարաններում գերազանցությամբ սովորող աշակերտների անունները հրապարակվում են «Դասարան»-ի կայքի գլխավոր էջում),
- «Դասարան»-ի օգտատերերից (աշակերտ, ծնող, ուսուցիչ, տնօրեն) ստացված բողոք-նամակների և զանգերի արձանագրում, կարգավորում կամ անհրաժեշտ կառույցին/մարմնին վերահասցեագրում, հեռախոսային և նամակագրական աջակցության իրականացում (չորրորդ եռամսյակի ընթացքում ստացված 3,370

զանգին և 4,827 նամակին տրվել են սպառիչ պատասխաններ, և կատարվել են անհրաժեշտ կարգավորումները),

- հետադարձ կապի ապահովում, օգտատերերի արձագանքների, կարծիքների և առաջարկությունների պարբերական վերլուծություն, դիտարկում,
- տարվա ընթացքում իրականացվել են անհրաժեշտ բոլոր տեխնիկական աշխատանքները ուսուցիչների համար նախատեսված էլեկտրոնային միջավայրի անխափան աշխատանքն ապահովելու, ինչպես նաև ուսումնական պլանում կատարված փոփոխությունների ադապտացմանը, մասնավորապես՝ 12-րդ դասարանի ուսումնական պլանի փոփոխություններին համարպատասխանեցնելու ուղղությամբ:

2. Տնօրեններին տրամադրված էլեկտրոնային կառավարման և տեղեկատվական գործիք

Ուսումնական գործընթացի էլեկտրոնային կառավարումը տվյալ դպրոցի մակարդակով վերահսկելի դարձնելու նպատակով «Դասարան»-ը մշակել է կառավարման գործիք՝ նախատեսված բոլոր հանրակրթական դպրոցների տնօրենների համար (1.334 դպրոց, հետևապես՝ 1.334 տնօրեն):

Այս էլեկտրոնային գործիքի միջոցով տնօրենին տեսանելի է դառնում՝

- դպրոցում դասավանդող ուսուցիչների ընդհանուր թիվը,
- դպրոցում սովորող աշակերտների ընդհանուր թիվը,
- դպրոցում առկա բոլոր դասարանները,
- դպրոցում գերազանց առաջադիմությամբ սովորող աշակերտների ընդհանուր թիվը՝ արտահայտված տոկոսով,
- դպրոցում սովորող աշակերտների բացակայությունների ընդհանուր թիվը՝ արտահայտված տոկոսով,
- դպրոցում սովորող աշակերտների միջին գնահատականը,

- գերազանցությամբ սովորող աշակերտների, բացակայությունների և միջին գնահատականի փոփոխությունների ընդհանուր պատկերը մեկ շաբաթվա կտրվածով,
- ուսուցիչների մուտքագրած գնահատականները և տնային հանձնարարությունները:

Բազմաթիվ տնօրենների խնդրանք-առաջարկով ստեղծվել է «Մոնիթորինգ» բաժինը, որը հնարավորություն է ընձեռում տնօրեններին տեսնելու, թե տվյալ դպրոցի օպերատորը ինչ աշխատանքներ ունի կատարելու «Առարկաներ», «Դասացուցակ», «Աշակերտների շարժ» և «Մպասման ցուցակ» բաժիններում, ինչպես նաև, թե ինչքանով են ուսուցիչները կատարում ամենօրյա գնահատականների և տնային հանձնարարությունների մուտքագրումները:

Չորրորդ եռամսյակում ամբողջովին վերափոխվել է տնօրենների համար նախատեսված դպրոցի կառավարման համակարգը. այժմ տնօրեններն առավել լայն հնարավորություն ունեն դիտարկելու և վերահսկելու ուսուցիչների կողմից կատարվող ամենօրյա աշխատանքը, թերացումներն ու բացթողումները:

Դպրոցների էլեկտրոնային կառավարման և տեղեկատվական գործիքի միջոցով տնօրենն իրականացնում է՝

- էլեկտրոնային մատյանում և էլեկտրոնային օրագրում ուսուցիչների կողմից ամենօրյա մուտքագրումների կատարման վերահսկում,
- դասարանների ամփոփաթերթիկների՝ ըստ դասավանդվող առարկաների կիսամյակային և տարեկան գնահատականների, բացակայությունների ընդհանուր թվի վերահսկում,
- 120-200 ժամ բացակայություն ունեցող աշակերտների վերաքննության գնահատականների և դրանցով պայմանավորված կիսամյակային ու տարեկան ամփոփիչ գնահատականների փոփոխության գործընթացի՝ էլեկտրոնային ամփոփաթերթիկում արտացոլման վերահսկում,

DASARAN | ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ EDUCATIONAL PROGRAM

- ուսուցիչների կողմից համապատասխան դասարաններում մուտքագրված գնահատականների ուշացումների և փոփոխությունների վերահսկում ըստ ամիսների,
- սխալ մուտքագրումների կամ արդեն մուտքագրված գնահատականների փոփոխման կանխում,
- դպրոցի ուսուցիչների, աշակերտների, ծնողների, ինչպես նաև Dasarան-ի աշխատակիցների հետ փոխադարձ նամակագրական կապի պահպանում:

Տնօրեններին տրամադրված դպրոցների էլեկտրոնային կառավարման և տեղեկատվական գործիքի աշխատանքն առավել արդյունավետ և կատարելագործված դարձնելու նպատակով «Խասարան»-ն իրականացրել է՝

- պարբերական բնույթ կրող հանդիպումների կազմակերպում դպրոցների տնօրենների հետ,
- որոշակի հաճախականությամբ կրկնվող դպրոցական այցերի կազմակերպում՝ համատեղ մշակելու նշված գործիքի զարգացման ռազմավարությունը, քննարկելու համակարգի գործառնությունները, դիտարկելու համակարգի վերազինմանը միտված կարծիքները և առաջարկությունները:

3. Դպրոցներում թափուր հաստիքների հայտարարությունների միասնական սոցանց համակարգի ստեղծում

Այս համակարգը ենթադրում է դպրոցներում ուսուցիչների առկա թափուր հաստիքների և դրանց համար նախատեսված մրցույթների մասին հայտարարությունների ստեղծում, տարածում, հայտադիմումների լրացում, հայտադիմումների բազավորում ըստ տեսակի և մեխանիզացված հասցեագրում, համապատասխան հաստիքների որոնում էլեկտրոնային համալիր էջի միջոցով:

Ըստ նախանշված ժամկետների՝ չորրորդ եռամսյակում ավարտվել են այս համակարգի ստեղծման աշխատանքները:

4. Խաղայնացված կրթություն

Այս համակարգը ենթադրում է ուսումնական գործընթացն առավել մատչելի, հաճելի դարձնելու, դասավանդման և ուսանելու ընթացքին ինտերակտիվություն, արդիականություն և հետաքրքրություն փոխանցելու հնարավորություն «Դասարան»-ում առկա և նոր մշակվելիք կրթական-ճանաչողական ու ինտելեկտուալ խաղերի, միջոյարոցական և արտաքին (միջազգային) խաղայնացված դասընթացների կազմակերպման միջոցով:

Ըստ նախանշված ժամկետների՝ չորրորդ եռամսյակում ավարտվել են այս գործառույթի իրականացման աշխատանքները:

5. Աշակերտների էլեկտրոնային խրախուսման համակարգի ստեղծում

Ուսումնասիրելով Անգլիայի կրթության ոլորտի բարեփոխումներին ուղղված լավագույն փորձը և համագործակցելով «Վիվո» կազմակերպության հետ՝ «Դասարան»-ն ստեղծել է աշակերտների էլեկտրոնային խրախուսման համակարգ աշակերտներին մոտիվացնելու, ինչպես նաև ուսուցման ընթացքում առողջ մրցակցություն ստեղծելու նպատակով:

Համակարգը ենթադրում է ըստ առարկաների/թեմաների դասակարգված և աստիճանավորված կրճքանշանների (բեյջերի) ստեղծում և համապատասխան չափորոշիչների բավարարման պարագայում (առաջադիմության նկատելի աճ, որևէ առարկայից գրանցած հաջողություններ, ներդրոցական, միջոյարոցական և արտադրոցական նվաճումներ) դրանց շնորհում (առցանց պարգևատրում):

Այս համակարգի ստեղծման աշխատանքներն ամբողջությամբ ավարտված են. սեպտեմբեր ամսից այն արդեն գործում է «Դասարան»-ի կայքում: Պարբերաբար աշխատանքներ են կատարվում համակարգի անխափան աշխատանքի և կատարելագործման նպատակով:

6. Ուսուցիչների միասնական էլեկտրոնային միջավայրի ստեղծում

Ուսուցիչների համար նախատեսված մասնագիտական միասնական էլեկտրոնային միջավայրը կմիավորի Հայաստանի տարբեր դպրոցներում միևնույն առարկան դասավանդող ուսուցիչներին մեկ հարթակում՝ հնարավորություն ընձեռելով նրանց քննարկելու դասավանդման ընդունված և նորարարական ձևաչափերը, կիրառվող ուսումնամեթոդական գրականությանը վերաբերող ընդհանուր մտահոգության հարցեր, դիտարկելու տպագրվող ձեռնարկների բովանդակային և տեխնիկական խնդիրները, կատարելու առաջարկություններ, փոխանակելու իրենց դասավանդման փորձը, մասնագիտական հմտություններն ու գիտելիքները: Վերոնշյալ էլեկտրոնային միջավայրը մշակվել է շահառուների հետ իրականացվող քննարկումների և ֆոկլուս խմբերի ստեղծման արդյունքում:

Չորրորդ եռամսյակում ավարտվել են այս գործառույթի իրականացման աշխատանքները:

Dasaran-ի եռամսյակային գործունեության արդյունքներ

- աշակերտների առաջադիմության աճ և բացակայությունների նվազում,
- ծնողների հետևողականության և իրազեկվածության աճ,
- էլեկտրոնային կրթության բնագավառում դասավանդման արդի մեթոդների ակտիվ կիրառման և ուսուցիչների համակարգչային իմացության աճ,
- ի տարբերություն թղթային մատյանի՝ էլեկտրոնային մատյանի՝ որպես գնահատման առաջնային աղբյուրի կիրառման պահանջի աճ («Դասարան»-ի կատարած հետազոտությունը վկայում է, որ ուսուցիչների շրջանում մեծացել է էլեկտրոնային մատյանի՝ որպես գնահատման սկզբնաղբյուրի կիրառման պահանջը՝ պայմանավորված թվային գնահատման մատչելիությամբ և դինամիկությամբ),
- ի տարբերություն թղթային օրագրի՝ էլեկտրոնային օրագրի՝ որպես առաջնային աղբյուրի գնահատման և կիրառման պահանջի աճ,

DASARAN | ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ EDUCATIONAL PROGRAM

- կրթական ծրագրի կայքի այցելությունների թվի աճ Հայաստանից և արտերկրից (ամսական այցելությունների միջին թիվը՝ 6,217,145. Ռուսաստանից՝ 25,748, ԱՄՆ-ից՝ 17,886 և այլն),
- հանրակրթության ոլորտի թափանցիկության աճ և կոռուպցիոն ռիսկերի նվազում,
- Հայաստանի Հանրապետության կառավարության մակարդակով ուսումնական գործընթացի վերահսկման արդյունավետության աճ (հանրակրթության ոլորտի համար պատասխանատու կառույցներին ուղարկված ամենամսյա գրությունների շնորհիվ մեծացել է տվյալ կառույցների կողմից իրենց ենթակայությամբ աշխատող դպրոցների նկատմամբ տարվող վերահսկելիության արդյունավետությունը),
- ՀՀ մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչությունների մակարդակով ուսումնական գործընթացի վերահսկման արդյունավետության աճ (հանրակրթության ոլորտի համար պատասխանատու կառույցներին ուղարկված ամենամսյա գրությունների շնորհիվ աճել է տվյալ կառույցների ենթակայությամբ աշխատող դպրոցների նկատմամբ վերահսկելիության արդյունավետությունը):

Պայմանագրի շրջանակում ստանձնած վերոնշյալ պարտավորություններից զատ՝

- «Ռասարան»-ի կողմից մշակված E-Stat առցանց վիճակագրական-վերլուծական գործիքը, որի միջոցով հանրապետական մակարդակում կատարվում է կրթական ցուցանիշների արդյունավետ մշտադիտարկում և վերլուծության է ենթարկվում դպրոցների արդյունավետությունը, աշակերտների կատարողականը, ինչպես նաև ժողովրդագրական տվյալների դինամիկան, արդեն իսկ լայնորեն կիրառվում է պետական կառավարման մարմինների կողմից, այդ թվում՝ ՀՀ կառավարության աշխատասազմի, Կրթության և գիտության նախարարության, Պաշտպանության նախարարության, Արտակարգ իրավիճակների նախարարության, ինչպես նաև Երևանի հանրակրթության վարչության կողմից:

Գործիքն այժմ հասանելի է նաև մարզերի կրթության ոլորտի պատասխանատուներին. այն հնարավորություն է ընձեռում ստանալու իրական ժամանակում թարմացվող հետևյալ տվյալները՝ մարզերում աշակերտների, ծնողների և ուսուցիչների բաշխվածությունն ըստ տարիքի կամ սեռի, աշակերտների միջին գնահատականը, գերազանցության և բացակայության ցուցանիշները, աշակերտական միջոցառողական և արտաքին (այլ երկրներ) տեղաշարժերը, ուսուցիչների ծանրաբեռնվածության ցուցանիշները, ուսուցիչ-աշակերտ հարաբերակցությունը և այլն:

- «Դասարան»-ը հայտարարել է «Դպրոցի արտաքին և ներքին տեսքի ամանորյա ձևավորում 2017-2018» մրցույթը, որն անցկացվում է 2012 թվականից ի վեր և կրում է շարունակական բնույթ:

Առաջարկ

Ամփոփելով «Դասարան»-ի եռամսյակային գործունեության արդյունքները՝ Ձեզ եմ ներկայացնում ուսումնական գործընթացի կառավարման զարգացմանն ուղղված մի քանի առաջարկ՝

- հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունն էլեկտրոնային կառավարման ոլորտում՝ առաջարկում եմ էլեկտրոնային մատյանն աստիճանաբար դարձնել գնահատման առաջնային աղբյուր՝ ապահովելով դրա թվային արխիվացումը՝ համաձայն օրենքի պահանջների,
- թղթային օրագրերն էլեկտրոնային օրագրերով փոխարինելու նպատակով հանրակրթական դպրոցների հետ կատարել համապատասխան աշխատանքներ՝ չեղարկելով թղթային օրագրի կիրառման ներքին պարտադրանքը,
- հիմք ընդունելով «Դասարան»-ի տրամադրած էլեկտրոնային գործիքների արդյունավետությունը դպրոցի առօրյա կյանքում՝ դիտարկել Հայաստանի

DASARAN | ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ EDUCATIONAL PROGRAM

Հանրապետության կառավարության կողմից «Դասարան»-ում առկա էլեկտրոնային գործիքների կիրառումը պարտադիր դարձնելու մասին համապատասխան որոշում ընդունելու հնարավորությունը,

- ավելի առարկայական քննարկումներ ծավալել՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության, միջազգային կազմակերպությունների և «Դասարան»-ի համագործակցության միջոցով «մեկ ուսուցիչ մեկ պլանշետ» գաղափարն իրագործելու շուրջ:
- «Նոր սերնդի դպրոց» հանրակրթական դպրոցների վարկանիշավորման մրցույթի շրջանակներում դպրոցներին տրամադրվող համակարգիչների քանակը ավելացնելու նպատակով դիտարկել ԿԳՆ-ի կողմից համակարգիչներ տրամադրելու հանգամանքը:
- Հաշվի առնելով «Գնացք 12» ուսուցիչների աշխատանքային սեմինարի գրանցած արդյունքները, ինչպես նաև բազմաթիվ ուսուցիչների ակտիվությունն ու հետաքրքրվածությունը՝ խնդրում ենք Ձեր աջակցությունը ուսուցիչների վերապատրաստման ծրագրի ընդլայնման համար:
- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիմնական դպրոցն ավարտած աշակերտների մի մասը կրթությունը շարունակում է նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում առաջարկում ենք «Դասարան» կրթական հարթակին միացնել նաև վերոնշյալ հաստատությունները:

Հարգանքով՝

«Նոր սերնդի դպրոց» հասարակական կազմակերպության
նախագահ Սուրեն Ալոյան

